ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/29 ծածկագրով Էլեկտրոնային աճուրդով տեսաձայնագրման համակարգի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 26.12.2022թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Արմենուհի Մադաթյան

Կարինե Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	Գևորգ Նահապետյան Ա/Ձ	store.provideo@gmail.com

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Գևորգ Նահապետյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		Գևորգ Նահապետյան Ա/Ձ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	12000000	11682000	11682000

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 Գևորգ Նահապետյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ Համակարգով ներկայացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (ներկայացված տեխնիկական բնութագրում նշված տեսանկարահանման համակարգի լրակազմում ներառվող՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական

- առաջադրանքը), որը պետք է համապատասխանի հրավերով պահանջվող՝ տեխնիկական բնութագրին կից ներկայացված տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **Գևորգ Նահապետյան Ա/Ձ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.1 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել **Գևորգ Նահապետյան Ա/Ձ**-ի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 2022թ դեկտեմբերի 29-ին, ժամը 12:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 29.12.2022թ. ժամը 12:30-ին

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

7.1 **Գևորգ Նահապետյան Ա/Ձ**-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

8.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել **Գևորգ Նահապետյան Ա/Ձ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Գնահատման արդյունքների մասին

9.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արա Խաչատրյան /նախագահ/

---------- Արմենուհի Մադաթյան

---------- Կարինե Մանուկյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/